

Կեսարիոյ մերձ ի Թոմարգայ, ՌՂ (= 1621) քվիև սկսեալ եւ ՌՁԱ. (= 1632) քուիև աւար-
սեալ» (Յակոբ Կ. Կեսարացի) :

Այսպէս իր առաջնորդական պաշտօնը
կը կատարէ խաղաղութեամբ եւ արդիւնա-
ւորութեամբ մինչև 1633, որ ատեն դար-
ձեալ վերջին անգամ ըլլալով Կ. Պոլիս կը
հրաւիրուի :

Կ. Պոլիս երթալէ առաջ սակայն կա-
րևոր ձեռնարկի մը կը մասնակցի, չինք
գիտեր թէ Կ. Պոլսոյ պատրիարք ընտր-
ուելէ՞ն յետոյ թէ, ինչպէս կ'ըսէ Դարա-
նաղցի (էջ 337), սոսկ իբր «մեծ եւ աւագ
վարդապետ» :

Ամէն պարագայի մէջ նշանակելի է որ
1633 ին Կ. Պոլիս գալէն առաջ կը հրաւիր-
ուի Սիւ ուր հաւաքուած էին Կիլիկեցի
«*սահակապ* եւ *սօլխարաւորն*» կաթողիկոսի
ընտրութեան համար :

Գրիգոր Կեսարացի իրեն հետ առնե-
լով Ներսէս վրդ. Սեբաստացին, որ իրեն

քաղաքիս Կեսարու Գրիգոր վարդապետի, որ
իբր զաննչիջանելի ջան վառեալ է ի պայծառու-
թիւն Հայաստանեացս եկեղեցւոյ» :

Գ. 1632 ին գրուած **Շարական** մը (Հայ վանօ-
րայի էջ 38) «ի յառաջնորդութեան մայրաքաղա-
քիս Կեսարու Գրիգոր վարդապետի, որ իբրեւ
զաննչիջանելի ջան վառեալ է ի պայծառութիւն
Հայ. եկեղեցւոյ» :